## 128. ՄՈՒԼԼԵՆ ՊԱՐ ԿՅԱ̈ԼԸ

*Մին թաղա փսակված աղա քյինա̈մ ա ղարիբոթուն, վըեր ըխշադանք անըե։ Մին քըղաքում ծառայության ա մննում, փող ըխշադում, տամ մուլլըեն, վըեր պահե։ Մոլլան էլ փողը տինո̈մ ա դո̈ւշակըեն տակըեն, պահում։*

*Վըեր կյամ ա էտ աղըեն տոն քյինա̈լի վախտը, քյինա̈մ ա մուլլըեն անա փողն օզում, մոլլան տամ չի։ Տա շատ ա քյինա̈մ-կյամ, կարում չի մուլլըեն անա փող պոկ տա։ Քյինա̈մ ա մին խընումու կուշտ, ղաչանք-պըղատանք անում, թա՝ խանում, մին թա̈հր ըրա, մուլլըեն անա փողըս եր կալ, ինձ տու։ Էտ խանումըն ծո̈րա̈ն աղըեն ան նո̈ւքյա̈րին ծեն ա տամ, նո̈ւքյա̈րին ասում.— Մունք քյինա̈մ ընք մուլլեն կուշտը, ես ու իմ աղաս մին մըեծ յալ-ըեխ փող ընք տանում տանք ծո̈րա̈ն, ասըենքյ պահե, ինքյը (մուլլեն փող տված աղան[1]) էտ վախտը նի կըմննե, ասե՝ մոլլա, փողըս ինձ տո, վըեր շատը տըեսնա խըեգըլը տըլական ա, տու վըեչ փողը հըմբըրելիս վախտը նի կըմըննես, ասըես՝ աղան քյըլը-վանըեն նհըետ եկալ ա, համ էլ կլխըես լեշա̈կը յոր օնըես ծըեռ-քետ փռնըես, ըսկըես պար կյա̈լը, մունք էլ լոխ նի կըմնննենքյ, բիրա̈ղի պար կյանք, մըեր փողն էլ յոր օնըենքյ, կյանք։ Նո̈ւքյա̈րը թա՝ լավ։*

[1] Ծանոթություն ասացողի։

Խանումը փողերը տըղեն նհըետ յըլլեխում կապում ա, տանում տամ մոլլըեն։ Սա վըեր օղում ա թա հըմբարըը, էտ տղան նի յա մննում, ասում.—Մոլլա փողըս ինձ տու։ Մոլլան էլ վըեր տըեսնում ա տըրա փողը նոր պիրածեն քշտին շատ խըեգյ ա, ասում ա.—Հանն գյիրին տակըեն, քյինա եր կալ։ Տա կարավաթըեն քցած դոշակը պիցըրցնում ա, գյոռքան էլ պիցըրցնում, ու-րան փողը յոր օնում։

Խանումը ըսկսում ա փողերը հըմբարըեւը, վըեր եռնան էլ մոլլան հըմբարըեւ էտ վախտը նըքյորը նի յա մննում, ասում.—Խանում, աղան քյըրվանավը եկալ ա։ Ասում ա, համ էլ խըննումըեն կլխըեն լեչակը յոր օնում, էրկու ծըեռքավ պեցուր փռնում, ըսկսում պար կյալը։ Տա վըեր ըսկսում ա պար կյալը, խանումն էլ ա նի մննում նոքյարին նհըետ պար կյամ։ Եռնան խըննումըեն տղան ան ղարիբոթուն եկած տղան էլ ըն նի մննում, ըսկսում չորսավ պար կյալը։ Մոլլան վըեր տըեսնում ա լոխ պար ըն կյամ, ինքյն էլ ա նի մննում նհըտնըեն պար կյամ։ Խանումը հըրցնում ա.—Մոլլա՛, իմ մարթըս եկալ ա, պար ըմ կյամ, էս տղըեն էլ հորն ա եկալ, պար ա կյամ, որա յըլ աղան ա էկալ, պար ա կյամ, նա յըլ կըրեցալ ա ուրան փողը քըղանա ինքյ օնըե, պար ա կյամ, պա տո՞ւ հինչու հետե յըս պար կյամ։ Մոլլան էլ թա՝ ես էլ տըեսնում ըմ, վըեր ծըղմընան ժուլիկներու ծըեռք ըմ ինգյալ, ինձ քյի-լանգյան մաչ ըք քցալ, փողը ծըեռքաս ինքյ կալալ ըսկսալ պար կյալը, ճարըս կտրած ըսկսալ ըմ ծըղնըհետ պար կյալ։

